Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

8413

[illegible]

3ка3
И-23

10.07.2013

24 SEP 2006

Պրոլետարներ, բոլոր յերկրների միացեք

«ԲԱՆՎՈՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 11

Հ-23

# ՆԱԽԱԳԻԾ

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

ЗКП3
Հ-23

ԼԵՆԻՆԱԿԱՆ

ЗКПЗ
Կ-23

8413

ազ.

1924
Ժողտնտեսության տպարա

Կենտրոնական կոմիտեյի կողմից

Թանկագին ընկերներ.

Մեր կուսակցության համար բջիջները ղեկավարելու հարցը միշտ յեղել է և է հիմնական և ամենակարևոր հարցերից մեկը։

Սակայն, բջիջների աշխատանքի մեր հարուստ փորձը կանոնագրության ձևով դեռևս անհրաժեշտ ընդհանրացման և կարգավորման չի յենթարկվել, որի մեջ ամբողջ կուսակցության փորձը ֆիկսա-

ցիայի յենթարկվեր։ Տեղերի փորձը ընդհանրացնող ու կարգավորման յենթարկող այդպիսի միասնական կանոնադրության մշակումը բավականաչափ կը խորացնի ու կամրացնի ներկա կուսբջիջի չափազանց բարդ ու ծավալուն աշխատանքը և դրանով մեծագույն չափով կապահովի կուսակցության հետագա աշխատանքի հաջողությունըն ամբողջությամբ։

Այս նպատակով Կենտրոնական Կոմիտեն դեռ անցած տարուց ձեռնարկել է ուսումնասիրել տեղերի փորձը, որի հիման վրա և մշակված է բջ-



ջիջների վերաբերյալ կանոնադրության ներկա նախագիծը։ Այս նախագիծը մշակվել է գավառական կուսաշխատավորների դպրոցում և մանրամասն վերամշակման և յենթարկվել զանազան կազմակերպությունների խոշոր ու տիպիկ բջիջների քարտուղարների կենտկոմին կից մաս անցյալում գումարված խորհրդակցության մեջ։

Լուրջ նշանակություն տալով այս կանոնադրության և հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա անմիջականորեն շոշափում է կուսակցության ստորին բջիջների ամբողջ մասսան, կեն-

տրոնական կոմիտեն անհրաժեշտ է համարում մեկ անգամ և ամբողջ կուսակցության լայն քննադատության յենթարկել այն։ Այդ պատճառով կենտրոնական կոմիտեն հրատարակում է ներկա կանոնադրությունը վորպես նախագիծ և առաջարկում է բոլոր կազմակերպություններին ու բջիջներին հանգամանորեն քննել այն և նահանգական կոմիտեների միջոցով կենտրոնական կոմիտեյին հաղորդել իրենց դիտողությունները՝ նախագծի վերաբերյալ փոփոխությունների ու լրացումների մասին վոչ ուշ, քան սույն



թվի նոյեմբերի 15-ն այն հաշվով, վոր այդ ժամանակ հնարավոր լինի վերջնականապես հաստատել Ռ. Կ. Կ. բջիջների վերաբերյալ կանոնադրությունը։

Ռ. Կ. Կ. Կ. Կ. քարտուղար՝

Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

## I. ԲՋԻՋՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Բջիջը կազմակերպվում է կուսակցության անդամների նախաձեռնությամբ, վորոնք աշխատում են տվյալ ձեռնարկության, կրթական կամ այլ հիմնարկության մեջ, զորամասում, գյուղում և այլն, այն դեպքում, յերբ կան վոչ պակաս, քան յերեք կուսակցական։ Ձեռնարկություններում, հիմնարկություններում և այլն, բջիջ չլինելու դեպքում՝ գավկոմը, շրջկոմը միջոցներ են ձեռք առնում կազմակերպելու բջիջներ։ Խոշոր, բարդ ձեռնարկությունների մեջ, բացի համագործարանային, այսինքն ամբողջ ձեռնարկության բջիջից (կուսկոլեկտիվից)՝ կազմակերպվում են



բջիջներ համքարությունների մեջ (համքարական բջիջներ), յուրաքանչյուր դեպքում նախորոք ստանալով գավկոմի կամ շրջկոմի հայտարարությունը։

Ծանոթություն.—Կարմիր բանակի զորամասերի և հիմնարկների բջիջների համար, բացի այս ընդհանուր կանոնադրությունից, հրատարակվում է լրացուցիչ հրահանգ, հաստատված կենտ.-կոմի կողմից։

2. Բջիջի կազմակերպման կարգը հետևյալն է։

ա. Բջիջը հաստատվում է գավկոմի (УКОМ), շրջանային կոմիտեյի (ОКРКОМ) կամ շրջկոմի (райком) կողմից (վորոնք ոգտվում են գավկոմի իրավունքներով), վորի համար կուսկոմը կազմակերպվող բջ-

ջիջն է ուղարկում իր ներկայացուցչին, վորը տվյալ ձեռնարկության մեջ, գյուղում և այլն աշխատող կուսակցականներին ու թեկնածուներին հրավիրում է կազմակերպչական ժողովի, ստուգում է ժողովվածների կուսակցական պատկանելիությունը կուս-փաստաթղթերով, կազմակերպում է բջիջի բյուրոյի ընտրությունը և կազմակերպված բջիջի անդամների ցուցակի հետ միասին ժողովի արձանագրությունը ներկայացնում է կուսկոմին ի՝ հաստատություն։

բ. Կուսկոմը (գավկոմը, շրջան. կոմ.) կազմակերպված բջիջի հաստատման մասին իր վորոշումը ուղարկում է նահանգակ. կոմիտեյին՝ նրա սանկցյան ստանալու։

գ. Մինչեվ կուսկոմի վերջնական



հաստատումը, բջիջը կարող է գումարել դռնփակ նիստեր, սակայն, իրավունք չունի կուսակցության անունից հանդես գալու։

3. Թեկնածուական բջիջների կազմակերպումը միայն թեկնածուներից կամ թեկնածուներից ու մեկ յերկու կուսակցականներից՝ չի թույլատրվում։

Այդպիսի ձեռնարկություններում (գյուղերում և այլն) աշխատող կուսակցության անդամներն ու թեկնածուները կուսկոմների կողմից ամրացվում են մոտակա հիմնարկությունների կամ ձեռնարկությունների բջիջներին։

Այդպիսի ամրացման անկարելիության դեպքում, նրանք հաշվի յեն առնվում կուսկոմի կողմից, տանում են կուսաշխատանքներ և

*գումարում են իրենց ժողովները կուսկոմի հատկացրած կազմակերպչի ղեկավարությամբ։*

*4. Անդամների ու թեկնածուների փոխադրությունը մի բջիջից մյուսը (մի ձեռնարկությունից մյուսն անցնելու, մի քաղաքից մյուսը տեղափոխվելու, զորացրման և այլ դեպքերում), կատարում է կուսկոմը, փոխադրողների փաստաթղթերն ստուգելուց հետո։*

Բջիջների ձուլման յեվ խմբավորման մասին.

*5. Բջիջների, վորպես ինքնուրույն ամբողջությունների, ցրումը հիմնարկությունների մեջ (բջիջների միաձուլում և այլն), վորպես ընդհանուր կանոն չի թույլատրվում, բացառություններ հնարավոր են սոսկ նահանգակ. կոմիտեյի թույլտվությամբ։*



*Փոքր բջիջի գործնեյությունը կենդանացնելու և ուժեղացնելու համար (քաղդաստիարակչական աշխատանքի ասպարեզում) կուսկոմը կարող է կապել ու միացնել նրա աշխատանքը ավելի ուժեղ ու խոշոր բջիջի աշխատանքի հետ։ Խմբավորված բջիջները պահպանում են իրենց ինքնուրույնությունը և ինքնուրույն կերպով կատարում են բջիջների վրա դրված բոլոր ֆունկցիաները։*

## II. ԲՋԻՋԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԿՈՒՍՈՐԳԱՆՆԵՐԻ ՀԵՏ

*6. Բջիջը իր աշխատանքները վարում է տեղական կուսկոմի ղեկավարությամբ։ Կուսկոմների վճիռներն ու վորոշումները պարտադիր են բջիջի համար։*

7. Բջիջը իր աշխատանքների մասին պարբերաբար հաշիվ է տալիս կուսկոմին։

8. Բջիջը իրավունք ունի տեղական կուսկոմի վճռի դեմ բողոք ներկայացնել ավելի բարձր կուսկոմին, միաժամանակ այդ մասին հաղորդելով տեղական կուսկոմին։ Բողոքը չի կասեցնում բողոքի առարկա դարձած վճռի կատարումը։

9. Բջիջի ցրումը կարող է կատարվել շրջկոմի կամ գավկոմի պլենումի միջոցով՝ միայն նահանգակ. կոմիտեի սանկցյայով։

10. Բջիջը, որպես ընդհանուր կանոն, իր մամուլը չի ունենում։ Բացառիկ դեպքերում միայն բջիջը կարող է ձեռք բերել մամուլ գավկոմի, շրջանային կոմիտեի և շրջկոմի թույլտվությամբ։



## III. ԲՋԻՋԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ

11. Բջիջն իր աշխատանքը կատարում է յերեք հիմնական ուղղությամբ

ա. Աշխատանք իր անդամների մեջ՝ նրանց դաստիարակելու, բոլորի մարքսիստական գիտությունների մակարդակը բարձրացնելու և կուսակցության առաջ դրված բոլոր հարցերի լուծման մեջ նրանց ակտիվ մասնակցություն քաշելու։

բ. Աշխատանք մասսայի մեջ՝ կուսակցության ազդեցությունը մշտապես նրանց մեջ տարածելու, նրանց քաղաքական-կուլտուրական մակարդակը բարձրացնելու, քաշելու նրանց խորհրդային շինարարությանը մասնակցության, բանվորա-գյուղացիական մասսաների

կարիքներն ու պահանջները պարգելու, անկուսակցական հասարակական կազմակերպությունների աշխատանքը ղեկավարելու։

գ. Մասնակցություն կուսակցության աշխատանքին՝ խորհրդային պետությունը կազմակերպելու, տնտեսությունը ղեկավարելու և ամբողջ կուսակցության կողմից նշված ու առաջ տարվող բոլոր խնդիրներն ու ձեռնարկությունները իր հիմնարկության, ձեռնարկության, գյուղի և այլն շրջաններում անց կացնելու։

12. Բջիջը բանվորական և գյուղացիական մասսաներին տվյալ վայրի կուսակցական ղեկավար մարմնի հետ կապող կազմակերպությունն է։ Աշխատանքի այս ասպարեզում բջիջի խնդիրներն են՝



ա. մասսաների մեջ անցկացնել կուսակց. լոզունգներն ու վորոշումները, բ. նոր անդամներ գրավել, գ. նպաստել տեղական կոմիտեյի կազմակերպչական ու ագիտացիոն աշխատանքին, դ. ակտիվ մասնակցել յերկրի տնտեսական ու քաղաքական կյանքին՝ վորպես կուսակցական որգան։ Բջիջն իր Ֆրակցիայի միջոցով ղեկավարում է գործկոմի, կոոպերացիայի և այլ մարմինների աշխատանքները, իր անդամներին և անկուսակցական բանվորներին քաշում է արտադրական աշխատանքի մեջ և ազդում է տվյալ ձեռնարկության, հիմնարկության ու տեղի արտադրական կյանքի վրա։

## Բջիջի աշխատանքի ծրագրված բնույթը

*Իր աշխատանքի առավելագույն արդյունավետության ապահովման նպատակով, բջիջը կատարում է այն, վորոշ, ռեալ ծրագրով, վորը մշակվում է տվյալ ձեռնարկության, գյուղի և այլ աշխատանքի պայմաններն ու միջավայրը հաշվի առնելու հիմունքով։*

## Նոր անդամներ կուսակցության մեջ գրավելու յեվ աշխատանքը անդամների ու թեկնածուների մեջ

*14. Բջիջը կուսակցության մեջ նոր անդամներ ու թեկնածուներ է ընդունում առաջավոր բանվորներից, բանվորուհիներից, գյուղացիներից ու ծառայողներից՝ ղեկավարվելով կանոնադրությամբ, կու-*



*սակցության համագումարների ու կոնֆերանսների վորոշումներով։*

*15. Բանվորական և գյուղացիական մասսաների լավագույն տարրերին, վորոնցից պիտի կազմվեն կուսակցության նոր կադրերը՝ հայտնաբերելու, հաշվի առնելու և կուսակցության մոտեցնելու համար, բջիջը, մասսայական ագիտացիայի և պրոպագանդայի բոլոր տեսակներից բացի, գործադրում է հետևյալ մեթոդները՝—նա պարբերաբար գումարում է իր դռնբաց ժողովները, քննության դնելով ամենից եյական, մասսաներին հետաքրքրող հարցերը և այդ ժողովներին գրավելով լավագույն, առաջավոր անկուսակցականներին, առաջ քաշելով ՌԿԿ-ը պաշտպանող առաջավոր, ամենահեղինակավոր անկու-*

սակցականներին, բանվորներին ու չքավոր գյուղացիներին (առանձնապես պատգամավոր բանվորուհիներին ու զորագրման յենթարկված կարմիր բանակայիններին) դարձնում է նրանց կուսակցության ազդեցության հաղորդիչները մասսաների վրա, իր միջից առանձնացնում է բավականաչափ պատրաստված ընկերների, հանձնարարելով նրանց անհատական կապ պահպանել անկուսակցականների հետ և հատուկ ուշադրություն է դարձնում կուսակցության մեջ քաշելու բանվորական յերիտասարդության (Ռ. Լ. Կ. Յե. Մ. անդամներից) և բանվորուհիներին։

16. Կուսակցության մեջ մտնող յուրաքանչյուր ընկեր պարտավոր կերպով պիտի անցնի կանոնա-



դրությամբ սահմանված թեկնածուական ստաժը։

Նկատի առնելով այս հանգամանքը, բջիջը իր գլխավոր ուշադրությունը կենտրոնացնում է թեկնածուի կուսակցական-քաղաքական դաստիարակության վրա և այս նպատակով նրա համար ապահովում է պարտադիր քաղգրագիտության ասընթաց անցնելու հնարավորությունը (քաղգրագիտական դպրոցի, խմբակների, տանը պատրաստվելու և այլ միջոցներով) և անհատապես ուսումնասիրում է թեկնածուին, տալով նրան հատուկ խնդիրներ և հետևելով նրանց կատարմանը։

17. Իր անդամների քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու նպատակով, բջիջը,

համաձայն կուսկոմի առաջադրությանց, ինքնուրույն կերպով կամ այլ բջիջների հետ միասին կազմակերպում է քաղգրագիտական դըպրոցներ, մարքսիստական ու լենինյան խմբեր և պարապում իր անդամներին անցնելու այդ դասընթացները, կազմակերպում է զեկուցումներ, դասախոսություններ և զրույցներ՝ քաղաքական, տնտեսական կյանքի, մարքսիստական տեսության, ինչպես և ընդհանուր գիտական ու զարգացողական հարցերի վերաբերյալ, քննում է կուսակցական համագումարների կոնֆերանսների վորոշումները, բարձր կուսօրգանների շրջաբերականներն ու հրահանգները, ինչպես և Խորհրդային իշխանության կարևորագույն դեկրետների նշանա-



կությունը, դրդում է իր անդամներին բաժանորդագրվել և կարդալ թերթերը, աշխատակցել նրանց, մասնակցել պատի լրագրի հրատարակության։

18. Ի շարս այս ամենի, բջիջը, վորպես կուսակցական-բոլշևիկական կրթության և անդամների վորակը բարձրացնելու հիմնական մեթոդ՝ իր անդամներին քաշում է կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ, կուլտուրական և այլ պրակտիկ աշխատանքների։ Այս խնդրի վրա հատուկ ուշադրություն դարձնելով, բջիջն իր աշխատանքն ամբողջական առումով տանում է այնպես, վոր ընթացիկ հարցերի քննությունն ու լուծումը կապվեն կուսակցության ընդհանուր քաղաքականության ու գոր-

ծելակերպի հետ, ինչպես և բոլշևիզմի առաջնորդող սկզբունքների հետ, և, վորպեսզի, դրան համապատասխան, գծվեն աշխատանքի ծրագրները, կազմվեն ժողովների որակարգերը և կատարվի առանձին քննվելիք հարցերի նախապատրաստական մշակումը՝ բջիջի բյուրոյի ընդհանուր ղեկավարությամբ։

19. Բջիջը հաստատուն կերպով անց է կացնում այն կանոնը, վոր չկա կուսակցության անդամ, առանց կուսակցական աշխատանքի, կուսաշխատանքների բաժանման ժամանակ նկատի առնելով իր յուրաքանչյուր անդամի ծանրաբեռնված լինելու աստիճանը, կուսակցության կողմից նրան հանձնարարված այլ խնդիրներով ու աշխատանքներով։ Նա կանոնավոր ու



պարբերաբար քննության է առնում իր աշխատանքների ընդհանուր հետևանքները, ինչպես և իր առանձին հանձնարարությունների կատարումը անդամների կողմից։ Ցերևան է հանում կուսակցության առանձին անդամների ու թեկնածուների կողմից կուսաշխատանքներից խուսափելու և կուսակցական դիսցիպլինան խախտելու դեպքերը և այլն, ժամանակին միջոցներ ձեռք առնելով՝ վերացնելու այդ յերևույթները։ Կազմակերպչական-դաստիարակչական նպատակներով բջիջի ընդհանուր ժողովներին քննության է դնում կուսակցական գծից շեղվելու ամենաբնորոշ յերևույթները։

20. Կուսակցության անդամներին ու թեկնածուներին իրենց ընդունակություններին ու հակումներին

*համապատասխան պրակտիկ աշխատանքների քաշելով, բջիջը ժամանակին օգնում է նրանց իր ղեկավարությամբ, խորհուրդներով ու ցուցմունքներով։ Հանձնարարված աշխատանքի ընթացքում այս կամ այն ընկերոջ կողմից առանձին նախաձեռնություն, ակտիվություն ու ընդունակություն յերևան բերելու դեպքում, բջիջը միջոցներ է ձեռք առնում այդ ընկերներին առաջ քաշելու՝ ավելի բարձր աստիճանի աշխատանքի, հաղորդում է նրանց մասին կուսկոմին՝ նրանց ավելի լայն չափերով օգտագործելու նպատակով։*

**Բջիջի· կապը անկուսակցական մասսաների հետ յեվ աշխատանքը նրանց մեջ.**



*21. Բջիջը ուշադրությամբ ուսումնասիրում է անկուսակցական բանվորական ու գյուղացիական մասսաների տրամադրությունն ու կարիքները, ինչպես և նրանց վերաբերմունքը՝ դեպի կուսակցական, խորհրդային ու պրոֆեսիոնալ կազմակերպությունների ձեռնարկությունները, ժամանակին տեղեկացնելով այդ մասին կուսկոմին և դրա հետ միասին ներկայացնելով իր կոնկրետ առաջարկությունները։*

*22. Բջիջը բանվորա-գյուղացիական լայն մասսաների կենցաղը բարձրացնելու և նրանց շահերի պաշտպանության հետ կապված հարցերը քննության է դնում. նախագծում միջոցներ է, առաջ քաշելով բանվոր-բանվորուհիների լայն մասսաներին, իր վորոշումներն ու*

առաջարկություններն անց է կացնում համապատասխան խորհրդային, պրոֆեսիոնալ և կոոպերատիվ ֆրակցիաների միջոցով։

23. Բջիջի այդ աշխատանքը հատուկ նշանակություն և հատուկ թափ պիտի ստանա մասնավոր ձեռնարկություններում, ուր, բանվորների շահերը պաշտպանելու հողի վրա, կոմունիստները, հենվելով պրոֆմարմինների վրա՝ մասսաների գլուխը պիտի անցնեն, ղեկավարելով նրանց պայքարը։ Այն մասնավոր ձեռնարկություններում, ուր չկան բջիջներ ու առանձին կուսակցականներ, ամենամոտ գտնվող ձեռնարկության բջիջն է տանում ամբողջ աշխատանքը, կապ ստեղծելով մասնավոր ձեռնարկության բանվորների հետ։



24. Բանվորական հասարակականության ծավալման նպատակով բջիջը պաշտպանում է բանվորների հասարակական նախաձեռնության արտահայտությունը, մասնավորապես կուլտ-կրթական, քաղաքական բնույթ ունեցող կամավոր բանվորական միավորումներ կազմակերպելու խնդրում (բնակարանային ընկերություններ, բանթղթակիցների խմբակներ, կուլտշեֆային կազմակերպություններ, հայրենակցական միություններ, ֆիզկուլտուրայի ընկերություններ, ոդանավատորմիղի, Մոպրի, գործոխմի, ԲԳՏ-յան նպաստող բջիջներ և այլն)։

Բջիջը, ձգտելով վոր այդ կազմակերպությունները վորքան կարելի յե բանվորական լայն խավեր

ընդգրկեն իրենց մեջ, ձգտում է իր անդամներին մտնել այդ կազմակերպությունների մեջ և ղեկավարել նրանց աշխատանքները կազմակերպված ֆրակցյաների միջոցով, միաժամանակ միջոցներ ձեռք առնելով լավացնել ֆրակցիաների աշխատանքները։

25. Կարևորագույն հարցերը մասսաների առաջ լուսաբանելու և հասարակակացնելու համար բջիջը կազմակերպում է դասախոսություններ, զեկուցումներ, զրույցներ։ Բջիջը հատուկ ուշադրություն է դարձնում մանրակրկիտ կերպով նախապատրաստելու և կազմակերպված կերպով տանելու պրոֆմիությունների պարբերական պատգամավորական ժողովները և բանվորական ընդհանուր ժողովները. իսկ գյուղական



վայրում—գյուղժողովները, գյուղական չայն կոնֆերանսները և բատրակների ժողովները։

26. Բջիջը միջոցներ է ձեռք առնում մասսաների մեջ տարածելու թերթերի խմբական ու անհատական բաժանորդագրությունը և իրագործում է գյուղթղթակիցների և բանթղթակիցների ցանցի ընդարձակումը, մանավորապես իր միջից տալով այդպիսիներին։

27. Աշխատավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու նպատակով բջիջը մասնակցում է բոլոր տեսակի կուլտ-կրթական աշխատանքներին ձեռնարկություններում և գյուղհիմնարկներում (ակումբներ, ընթերցարաններ, գրական յերեկոներ, գրականության ընթերցում, զրույց որևէ խնդիր-

ների մասին, մերձեցման յերեկոներ, բանավոր ու պատի լրագիր, ագիտ-դատեր և այլն)։

28. Բջիջի ազդեցության սահմաններում գտնվող վոչ կուսակցական որգանների կազմակերպության միջոցին՝ խորհուրդների, կոպերատիվների, պրոֆեսիոնալ որգանների և այլն, բջիջը, իր անդամներին առաջադրելու հետ միասին՝ առաջադրում է նաև մասսաների մեջ հեղինակավոր և կուսակցությանը մոտ անկուսակցական բանվորներին, բատրակներին ու գյուղացիներին։

29 Բջիջը հատուկ ուշադրություն է հատկացնում բանվորուհիների և գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքին, վորպես մասսաների մեջ տարվելիք աշխատանքի հիմնական բնագավառներից մեկին։ Կու-



սակցության ամենապատրաստված ու ակտիվ անդամներից մեկին՝ վորպես հատուկ կազմակերպչի, բջիջը հանձնարարում է կանանց մեջ տարվելիք աշխատանքը, նույն գործին մղելով նաև իր մյուս անդամներին։ Կազմակերպիչը մասնավորապես աշխատում է բանվորուհիներին գրավել պրոֆշարժման մեջ, այդ խնդրում սերտ կապ պահպանելով գործարկոմի ֆրակցիայի հետ։ Բջիջը հետևում է պատգամավորուհիների կազմին, ձգտելով քաղաքում առավելություն տալ պրոլետարական տարրերին, իսկ գյուղերում բատրակ և գյուղացի տարրերին և քաղաքականորեն պատրաստված կանանց քաշում է հասարակական-պետական և պրոֆեսիոնալ աշխատանքների։

## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

30. Բջիջն ամեն կերպ օգնում է Ռ. Լ. Կոմյերիտմիության բջիջին բանվորա-գյուղացիական յերիտասարդության մեջ տարվող նրա քաղ լուսավորական և տնտեսավարական աշխատանքների ընթացքում, առանց բծախնդիր խնամակալության, պահպանելով իր ղեկավարությունը նրա գործունեության բոլոր ասպարեզներում, հետևյալ միջոցներով.—

ա. Ղեկավարելով Ռ. Լ. Կոմյերիտմիության աշխատանքներն իր ներկայացուցչի և կոմյերիտմիության մեջ աշխատող կուսակցության անդամների միջոցով:

բ. ՌԿԿ բջիջի անդամների սիս-



տեմատիկ աշխատանքով կոմյերիտմիության կազմակերպությունների մեջ և վերջինիս անդամներին զեկուցումների, դասախոսությունների, զրույցների, քաղգրագիտական դպրոցների, քաղլուսավորական խմբակների, բջիջի դռնբաց ժողովների և այլ աշխատանքների հրավիրելով:

### Բջիջի մասնակցությունը տեղական եվ համակուսակցական աշխատանքներին:

31. Բջիջն ակտիվ մասնակցություն է ցույց տալիս ինչպես տեղական, նույնպես և համակուսակցական համագումարների, կոնֆերանսների ու խորհրդակցությունների օրակարգի հարցերի քննությանը, ինչպես և այն հարցերի,

վոր կուսակցությունն է արծարծում մտքերի փոխանակության կարգով. իր նախաձեռնությամբ կազմակերպությունների քննության համար հարցեր է առաջադրում, իր պատգամավորներն է ընտրում կոնֆերանսների համար և կուսակցական ժողովներին ու խորհրդակցություններին, իր ներկայացուցիչներըն է ուղարկում և զեկուցողները նշանակում:

Բջիջի մասնակցությունը յերկրի քաղաքական ու տնտեսական կյանքին:

32. Բջիջը մասնակցում է համապետական հիմնարկների, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ և տնտեսական օրգանների աշխատանքի հիմնական գծի վորոշմանը՝ զեկուցումներ լսելով, համագումարների, կոնֆերանսների նյութերի, վորոշումների



հետ ծանոթանալով և համապատասխան բանաձևեր, վորոշումներ ու առաջարկություններ հանելով և Գավկոմին ուղարկելով ու բարձր կուսօրգաններին հաղորդելով:

33. Բջիջն ըստ ամենայնի օժանդակում է Խորհրդային օրգանների թերությունները վերացնելու և պետական ապարատը լավացնելու աշխատանքին, նպաստում է Խորհրդային իշխանության քաղաքական ամրապնդման, նրա հեղինակության բարձրացման, օգնում է համապատասխան մարմիններին պայքարելու Խորհրդային իշխանության հեղինակությունը ձգող տարրերի դեմ և այլն:

34. Արդյունաբերական ձեռնարկների բջիջները, չմիջամտելով նըրանց ղեկավարների արտադրական

ու վարչական ամենօրյա ընթացիկ աշխատանքին՝ հետևում են տնտեսության և արտադրության վերաբերյալ կուսակցության ընդհանուր հրահանգների ու որոշումների ճըշգրիտ կիրառմանը տվյալ ձեռնարկության մեջ և գործադրված աշխատանքի կոնկրետ հետևանքներին։ Պրոֆեսիոնալ և տնտեսական օրգանների հետ միասին իր անդամներին ու ձեռնարկության բանվորներին գրավում է ակտիվ ու գիտակից մասնակցության՝ ձեռնարկության արտադրական ու արդյունաբերական կյանքի բնագավառներում՝ բջիջի ընդհանուր ժողովներում (դոնբայ կամ դանվիակ), ինչպես և բանվորների ընդհանուր և պատգամավորական ժողովներում լսելով ձեռնարկության ղեկավար-



ների զեկուցումները տվյալ ձեռնարկության և տնտեսական օրգանի գործունեության բոլոր հիմնական հարցերի ու բնագավառների մասին, կազմակերպելով արտադրական խորհրդակցություններ, աշխատանքի գիտական կազմակերպության բջիջներ, արտադրական խմբակներ և մասնակցելով արտադրական կոնֆերանսներին։

Բջիջները Խորհրդային ու տնտեսական օրգաններին կից կազմակերպված հանձնաժողովներին ու խորհրդակցություններին ուղարկում են իրենց ներկայացուցիչներին, որոնք իրենց կատարած աշխատանքի մասին հաշիվ են տալիս բջիջներին։

35. Խորհրդային հիմնարկության բջիջը ծանոթանում է հիմնարկու-

թյան գործնեության հետ, աջակցում է բյուրոկրատիզմի դեմ պայքար մղելու և այդ նպատակով զեկուցումներ է լսում հիմնարկության ընդհանուր ուղղության և աշխատանքի ընթացքի մասին, սակայն առանց յերբեք փորձելու անմիջականորեն ղեկավարելու հիմնարկության գործնեությունը և առանց միջամտելու նրա ղեկավարների վարչական կարգադրություններին։

36. Բջիջը գյուղում ղեկավարում է տեղական խորհրդային կոոպերատիվ և պրոֆեսիոնալ կազմակերպությունների աշխատանքները՝ պարբերաբար զեկուցումներ լսելով համապատասխան ֆրակցիաներից. խորհրդակցության նյութ է դարձնում տվյալ վայրի տնտեսական հարցերը, ինչպես՝ գավառակային



բյուջեն, հողաշինարարությունը և այլն. ակտիվ կերպով մասնակցում է գյուղատնտեսությունը բարձրացնելու և գյուղատնտեսական համայնական ձևերը գյուղացիական մասսաների գործնեությամբ զարգացնելու աշխատանքներին (արտելներ, զանազան ընկերություններ, կոմունաներ կազմակերպելու և այլն)։

37. Բջիջներն իրենց անդամներին, իսկ նրանց միջոցով նաև անկուսակցականներին՝ դրդում է իրենց ծառայության ու արտադրության հետ կապված պարտականություններն օրինակելի կերպով կատարելու, նպաստում են աշխատանքային դիսցիպլինայի հաստատման և աշխատանքի արտադրողականության բարձրացման՝ սիստեմատիկ

կերպով բանվորական մասսաներին քաշելով ձեռնարկության արտադրական կյանքի մեջ, ակտիվ մասնակցություն ցույց տալով բոլոր արտադրական խորհրդակցություններին, կոնֆերանսներին, հանձնաժողովներին, խմբակներին, վորոնք կազմակերպվում են ձեռնարկության սահմաններում, օգնելով բանվորի կողմից ցուցադրած ամեն մի նախաձեռնության՝ լավացնելու ձեռնարկության մեջ կատարվող աշխատանքը և այլն։

38. Բջիջի բոլոր անդամները պարտավոր են պրոֆմիությունների և կոոպերատիվների անդամ լինել և ակտիվ մասնակցել նրանց աշխատանքներին։

39. Տեղական խորհրդային, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ և այլ կազ-



մակերպությունների գործնեության վերաբերյալ իրենց բոլոր վորոշումները բջիջներն անց են կացնում համապատասխան ֆրակցյաների միջոցով։ Բջիջների և այդ որգանների ֆրակցիաների փոխհարաբերությունները սահմանվում են կուսակցական կանոնադրության «Ֆրակցիաները վոչ կուսակցական կազմակերպությունների մեջ» հատված 60—66 կետերով։

## IV ԲՋԻՋԻ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

40. Բջիջի ղեկավար որգաններն են՝ բջիջի անդամների ընդհանուր ժողովը և վերջինիս կողմից ընտրված բջիջի բյուրոն։

### Ընդհանուր ժողովը

41. Ընդհանուր ժողովը բջիջի բարձրագույն ղեկավար որգանն է.

նա գումարվում է բյուրոյի կամ բջիջի անդամների մեկ յերրորդի պահանջով: Ընդհանուր ժողովը համարվում է վավերական, յերբ տըվյալ վայրում գտնվող անդամների կեսից վոչ պակաս ներկա յեն: Բջիջի հերթական ժողովները գումարվում են պարբերաբար և ամսական յերկու անգամից վոչ պակաս:

Ժողովի օրակարգը նշանակում է բջիջի բյուրոն և վերջնականապես հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից:

42. Բջիջի ընդհանուր ժողովը քննում է համաքաղաքային, համակուսակցական և տեղական կյանքի վերաբերյալ խնդիրներ, հաստատում է բջիջի աշխատանքի ծրագիրը, լսում ու քննում է բջիջի



քարտուղար-կազմակերպիչի հաշվետվությունները բյուրոյի գործունեության մասին և համքարական ու այլ կազմակերպիչների առանձնահատուկ աշխատանքները, քննում է Ռ. Կ. Կ. անդամ ու թեկնածու ընդունելու դիմումները, բջիջի անդամների մուծումների խնդիրը հարթելու, ինչպես և կուսակցությունից հեռացնելու հարցերը նայելու. լսում ու քննության է յենթարկում խորհրդային, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ կազմակերպությունների ֆրակցիաների և բջիջի անդամների հաշվետվությունները իրենց աշխատանքների մասին:

43. Ամեն մի ժողով դեկավարելու համար ընտրվում է նախագահություն կամ նախագահ ու քար-

տուգար, վերջինս ժողովի արձանագրությունը կազմելու համար։

Բոլոր հարցերը վորոշում են ձայների պ ա ր զ մեծամասնությամբ։

## Բջիջի բյուրոն

44. Ընդհանուր ժողովը ընտրում է բյուրո, վորպես իր գործադիր մարմինը, վոչ պակաս, քան 3 անդամից և 2 փոխանդամից, յերեք ամիս ժամանակով. ընդհանուր ժողովի վորոշմամբ բջիջի նոր ընտրությունը կարող է կատարվել ժամանակից առաջ, նախորոք այդ մասին հաղորդելով շրջկոմին կամ գավկոմին։

Ծանոթություն.—Հինգ հոգուց պակաս անդամներ ունեցող բջիջը բյուրոյի փոխարեն ընտրում է միայն մեկ քարտուղար-կազ-



մակերպիչ, վորպիսի դեպքում բջիջի ընդհանուր ժողովը գումարվում է յուրաքանչյուր շաբաթ պարտադիր կերպով։

45. Մեկ ընդհանուր ժողովից մինչև մյուսը բջիջի աշխատանքները վարում է բյուրոն. Նա գործում է բջիջի անունից և պատասխանատու յե իր գործնեության համար ընդհանուր ժողովի և կուսկոմի առաջ։

46. Բջիջի բյուրոն իր միջից ներկայացուցիչներ է տալիս Ռ. Լ. Կ. Յե. Մ. բջիջի և կանանց մեջ աշխատելու, համաձայն համագավառային ու շրջանային ծրագրի, և տեղական առանձնահատկությունները նկատի ունենալով՝ մշակում է բջիջի աշխատանքների ծրագիրը,

ներկայացնելով այն ընդհանուր ժողովին ի հաստատություն։

Բյուրոն կուսակցական աշխատանքները բաժանում է թե իր անդամների և թե բջիջի բոլոր մնացած անդամների մեջ, հետևում է այդ աշխատանքների կատարման և զեկուցում ընդհանուր ժողովին։ Բյուրոն ինքը իրականացնում է և հետեվում միաժամանակ, որ բջիջի անդամներն ևս իրականացնեն բջիջի, բարձր կուսօրգանների որոշումներն ու կուսակցական կանոնադրության պահանջները։ Նա կազմում է բջիջի ընդհանուր ժողովի օրակարգը, գործարկոմի, խորհրդի, կոոպերատիվի և այլ ֆրակցյաների հետ միասին պատրաստում է ձեռնարկության, հիմնարկության, գյուղի և այլ սահ-



մաններում տեղի ունեցող ընդհանուր ու պատգամավորական ժողովների օրակարգը՝ բջիջի ընդհանուր ժողովի համար նշանակում է զեկուցողներ և պատրաստում՝ նյութեր ու համապատասխան առաջարկություններ. իր անդամներին պատրաստում է՝ առաջ քաշելու կուսակցական, պրոֆեսիոնալ և խորհրդային աշխատանքի. իրականացնում է բջիջի ընդհանուր ժողովի և բարձր կուսօրգանների որոշումները կանոնավորապես ներկայացնում է կուսկոմին սահմանված զեկուցումներ. ինչպես և բյուրոյի ու ընդհանուր ժողովների արձանագրությունները։

## Բջիջի քարտուղար-կազմակերպիչը։

**47. Քարտուղար—կազմակերպիչը**

ընտրվում է ըջիջի բյուրոյի կազմից, ունենալով մի տարուց վոչ պակաս կուսակցական ստաժ։

48. Խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների (ուր կան մեծ թվով բանվորներ կամ կուսակցության անդամներ) քարտուղար-կազմակերպիչը ազատվում է բոլոր այդ տեսակի աշխատանքներից։

Ծանոթություն.— Վարձատրույամբ աշխատող այդպիսի քարտուղար-կազմակերպիչների և ըջիջի տեխնիկական ապարատի չափը վորոշվում է յուրաքանչյուր տարի սահմանվող շտատի համաձայն։

49. Քարտուղար-կազմակերպիչը ըջիջի կազմից կամ է պահպանում կուսկոմի և Արհրդային, միութենական ու կոոպերատիվ օր-



գաների, ֆրակցիաների, ինչպես և վարչատնտեսական ղեկավար աշխատավորների հետ։

Նա ղեկավարում է ըջիջի ամենորյա աշխատանքը՝ համաձայն ըջիջի բյուրոյի ընդհանուր ժողովի վորոշման, հետևում է յուրաքանչյուր անդամի աշխատանքին՝ տալով նրան համապատասխան ցուցմունքներ, ուսումնասիրում ու ղեկավարում է ըջիջի անդամների աշխատանքը անկուսակցականների հետ անհատական կապ հաստատելու խնդրում, ղեկավարում է անկուսակցականներին ըջիջի դռնբաց ժողովներին դրավելու աշխատանքը և միջոցներ է ձեռք առնում կազմակերպելու միտինգներ, զեկուցումներ, դասախոսություններ, ներկայացուցչական ժողովներ

և այլն։ Նա հետևում է կուսակցական-դաստիարակչական աշխատանքի ընթացքին կուսակցության անդամների մեջ և քաղաքական-լուսավորական աշխատանքին՝ անկուսակցական մասսաների մեջ։

50. Քարտուղար-կազմակերպիչը իր աշխատանքների ընթացքում հաշիվ է տալիս բյուրոյին և բջիջի ընդհանուր ժողովին։ Նա պատասխանատու յէ անդամների ու թեկնածուների ցուցակագրելու և հաշվի առնելու խնդրում, ինչպես և բջիջի ամբողջ գրագրության համար։ Նա, համաձայն շրջկոմի, գավկոմի և շրջանային կոմիտեյի ցույց տված ձևերի կազմում է հաշվետվությունները, վարում է դրամական հաշվետվությունը, հավաքում ու կոմիտեյին է հանձնում անդամավճար-



ները և անդամներից գանձվող այլ վճարումները, կազմում է ժողովների օրակարգը և հրավիրում բյուրոյի նիստերը։

51 Բջիջը կուսակցական բոլոր մուծումների մինչև 10 տոկոսը թողնում է իր տրամադրության տակ։

## V. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՇՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ.

Համքարական բջիջների կազմակերպումը և համքար. կազմակերպիչների առաջ քաշելը։

52. Անկուսակցական բանվորական մասսաների հետ կապն ամրապընդելու և կուսաշխատանքն ուժեղացնելու նպատակով խոշոր ու բարդ ձեռնարկությունների մեջ (բանակով շատ բջիջներ ընդգրկող)

կուսակցական բջիջները կազմակերպվում են առանձին համքարություններում (համքարական բը ջիջներ)։

Ծանոթություն.— Մանր համքարություններում աշխատում են համքարական կազմակերպիչներ։

53. Համքարական բջիջները կազ մակերպվում են ըստ տվյալ ձեռնարկության համքարությունների, բաժանմունքների և արհեստանոցների, այն պայմանով, որ նրանց մեջ աշխատող կուսանդամների և թեկնածուների թիվը 25-ից պակաս չլինի։ Բացառիկ դեպքերում, տվ յալ համքարության առանձին կարևորությունը նկատի առնելով, բջիջի բյուրոն կարող է ավելի քիչ անդամներ ընդգրկող համքարական



բջիջ կազմակերպել՝ ստանալով գավ կոմի ու շրջկոմի հաստատությունը։

54. Համքարական բջիջը համագործարանային կոլեկտիվի մասն է կազմում, համքարության մեջ աշխատում է գործարանային կոլեկտիվի և նրա բյուրոյի ղեկավարությամբ և կատարում է նրանց բոլոր ցուցմունքներն ու վորոշումները։ Գործարանային բջիջն ու նրա բյուրոն, նայելով վորպես հիմնական կուսակցական կազմակերպությունը՝ մշտապես իրազեկ պիտի լինի համքարությունների կյանքին ու աշխատանքին. ամբողջ կուսակցական կոլեկտիվի աշխատանքը ղեկավարելով ձեռնարկության մեջ, պիտի պայքարի ամեն տեսակի համքարական ձգտումների և կոմունիստների ու բանվորների նեղ համ

քարական շահերով տարվելու դեմ։ Համքարություններում քննվող բոլոր հարցերը գործարանային բջիջը լուսավորում է համքարական շահերն ու կարիքներն ընդհանուր գործարանային շահերի հետ կապելու և ներդաշնակելու տեսակետով։

Ծանոթություն.— Հատուկ դեպքերում, որ. յերբ շրջանում կա միայն մեկ խոշոր ձեռնարկություն, այլևս ընդհանուր գործարանային բյուրո չի ընտրվում, այլ նրա ֆունկցյաները կատարում է շրջկոմը։

55. Համքարական բջիջը իր անդամների և թեկնածուների ընդհանուր ժողովում ընտրում է բյուրո 3 կամ 5 անդամներից, նայած բջիջի մեծության, և ընտրված բյուրոյի կազմը ներկայացնում է հա-



մագործարանային կոլեկտիվի բյուրոյին ի՝ հաստատություն։

Համքարական բջիջի բյուրոն իր անդամներից ամենափորձառուին ու կուսակցական աշխատանքներին գիտակ կուսակց. անդամին ընտրում է քարտուղար։

56. Համքարական բջիջը վարում է բջիջի անդամների ու թեկնածուների ցուցակը, ինչպես և հանձնառությունների կատարման տեղեկագրերը. նա իր ժողովների արձանագրությունները և անդամավճարներն ու այլ մուծումները հանձնում է գործարանային բջիջի բյուրոյին։

57. Համքարական բջիջները համագործարանային բջիջի գլխավոր աջակիցներն են՝ բանվորական մասսաների և բջիջի անդամների շրջա-

նում նրա վարած աշխատանքների ընթացքում,

58. Համքարությունների մեջ աշխատանքները համաձայնեցնելու նպատակով գործարանային բջիջի բյուրոն վոչ պակաս, քան ամիսը 2 անգամ հրավիրում է համքարական կազմակերպիչների և համքարական բջիջների քարտուղարների իսկ հարկավոր դեպքում նա և բյուրոների լրիվ կազմերի խորհրդակցություն: Խորհրդակցություններում քննվում ու վորոշվում են կուսակցական և այլ աշխատանքի վերաբերյալ հերթական ընդհանուր ու մասնավոր բնույթ կրող հարցեր, տեղի յե ունենում աշխատանքի փորձի փոխանակություն, կազմվում են գործարանային ու համքարական բջիջների հերթական ժողովների



որակարգերը, արվում են ղեկավարող, հրահանգչական ցուցմունքներ ու բացատրություններ աշխատանքի ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ, վերանայվում են համքարական բջիջների կողմից կուսակցության մեջ վորպես թեկնածու ընդունված բանվորների, բանվորուհիների և այլոց ցուցակները:

59. Գործարանային բջիջների ընդհանուր ժողովները գումարվում են ամիսը յերկու անգամ, իսկ համքարական բջիջները ամեն շաբաթ:

60. Համքարակ. բյուրոները (համքարակ. կազմակերպիչը) ոժանդակում են գործարկոմին ու համագործարանային կոլլեկտիվին համքարություններում և ձեռնարկության մեջ ընդհանուր ու պատգամավորական ժողովներ, միտինգներ,

կամպանյաներ նախապատրաստելու և անցկացնելու, ձգտելով վորքան կարելի յե շատերին գրավել այդ ժողովներին, ինչպես և բջիջի դռնբաց ժողովներին մաքսիմում քանակությամբ անկուսակցական մասսաների ներկայությունը ապահովել, այդ բանի համար օգտագործելով բջիջի անդամներին, համքարությունների պատգամավորներին և կին պատգամավորուհիներին։

61 Համքարական բջիջի քարտուղարը (համք. կազմակերպիչը) պետի կապված լինի պրոֆլիագորների և պատգամավորների հետ, նըպատի նրանց կապվելու իրենց ընտրող բանվորների հետ, բարձրացնի նրանց հեղինակությունը համքարության բանվորների շըր-



ջանում, սակայն առանց ամենորյա աշխատանքի մեջ փոխարինելու պրոֆլիագորներին ու համք. պատգամավորներին։

62. Արտադրության նկատմամբ առավելագույն հետաքրքրություն առաջացնելու և օժանդակությունն ապահովելու համար (պետական և կոոպերատիվ ձեռնարկություններում) համքարական բջիջի բյուրոն (համք. կազմակերպիչը) հատուկ ուշադրություն է դարձնում կոմունիստների աշխատանքն որինակելի դարձնելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, ձգտելով համապատասխան տրամադրություն ստեղծել անկուսակցական մասսաների մեջ, բացատրելով նրանց բանվորների դրության կախումը նրանց ուշադիր

ու բարեխիղճ վերաբերմունքից դեպի արտադրության շահերը։

63. Համքարական բջիջի բյուրոյի կազմակերպած խմբական զրույցների ժամանակ համքարական կազմակերպիչը գործարանի կոմունիստների հետ միասին ծանոթացնում է բանվորներին յերկրի, նահանգի, գավառի, գործարանի անց ու դարձին, ինչպես և միջազգային քաղաքական դրության վերաբերյալ հարցերին։

64. Համքարական բջիջի բյուրոն բազմակողմանի միջոցներով համքարության բանվորներին մղում է քաղաքական և հասարակական—լուսավորական գործունեության, կազմակերպում է թերթերի ընթերցանություն ու բաժանորդագրություն, առաջ է քաշում ու խրախու